

## Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Ծնվել է 1965 թ. Էջմիածնի շրջանի Արփիմեդ (նախկինում՝ Աթարբեկյան) գյուղում:

1971-1982 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1982 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1984-1986 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1989 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն թվականին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել սարկավագ:

1990 թ. պաշտպանել է «Գրիգոր վարդապետ Սկևռացու կյանքը և մատենագրական ժառանգությունը» թեմայով ավարտաճառը:

1991 թ., ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Նույն թվականին հրավիրվել է դասախոսելու Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, ինչպես նաև Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնում:

1993-1995 թթ. եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին կից կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն:

1995 թ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի վարիչ-տնօրեն:

1996 թ. ներկայացրել է վարդապետական թեզ՝ «Սուրբ Գրիգոր Տաթևացու «Հարցմանց» և «Ոսկեփորիկ» գրքերի հայրախոսական աղբյուրները» թեմայով, և ստացել մասնավոր վարդապետության չորս աստիճաններ:

1999 թ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ:

2002 թ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի փնօրհնությամբ նշանակվել է Վիրահայոց թեմի առաջնորդ:

2003 թ. հունիսի 22-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի փոնին, ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: